

Lury ✓

329

18

Give receipt

~~361~~ ~~of 400~~

1999

2000

Լատ

329

№ 129

ՀՐԱՏԱՐԱԿ. ԿՈՎԿՈՍԻ ՀՈՑՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
(ՇՈՒՇՈՒ ՃԻՂԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ.)

№ 1




Լ. Կ. ԼՍԶԱՐԵԻԻՉ.

Հ Ա Յ Ր Ս

Թարգմ. Ս. Ղ.

859



Շ Ո Ւ Շ Ի

Տպարան Մկրտչևան Մահարեի Յանքեանցի

1894

3905

1 36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Доз. Ценз. Тифлисъ, 7-го Мая 1894 года.



329-2003


(1969-50)
2

24-328

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Սոյն պատմուածքը թարգմանուած է «Миръ Божій» ամսագրից, որից և առաջ ենք բերում Ռուս թարգմանչի քանի մի ծանօթութիւնները հեղինակի մասին: Լազար Լազարեւիչը՝ սերբական արդի գրականութեան մէջ ամենից աչքի բնկնող գրողներից մէկն է: Նա ծնուել է 1851 թուին՝ Սերբիայի Շարչ փոքրիկ քաղաքում: Բերդրազի Գիմնազիայում էր ուսումն աւարտելուց յետոյ, նա մտաւ Մեծ Գպրոցի իրաւաբանական բաժինը: Սակայն դէպի բժշկութիւնն ունեցած հակումն ստիպեց նրան հեռանալ հայրենիքից և դնալ Բեռլինի Բեռլինի համալսարանը բժշկութեան դոկտորի աստիճանով աւարտելուց յետոյ՝ Լազարեւիչը վերադարձաւ Բեյդրազ: 1879 թ. «Սրսսկա Զորա» ամսագրում լոյս տեսաւ նրա առաջին երկասերութիւնը՝ «Հայրս» խորագրով: Այդ պատմուածքը շուտով թարգմանուեց համաբնա բոլոր եւրոպական լեզուներով: Այդ ժամանակից է վեր Լազարեւիչը դարձաւ յայտնի գրող և նրա մի շարք մանր պատմուածքները, որոնց նիւթը ժողովրդական կեանքից էր առնուած, սկսան տարգրուել սերբական մամուլի զանազան օրգաններում: այդ պատմուածքների շնորհիւ ընդհանուրն ուշադրութիւնը դարձաւ երեւ. տասարդ բեյլետրիստի վրայ: 1882 թ. Լազարեւիչը լսեց և միայն վից տարի անցնելուց յետոյ գրեց «Քամի» երեւակայական վէպը: 1890 թուին արժուէի գիտութեանց ճիմարանը նրա «Նա ամեն բան գիտէ» պատմուածքն արժանացրեց հինգ հարիւր դննար մրցանակի՝ իբրև ամենաբարձր գեղարուեստական այն բոլոր գրուածքներից, որոնք նոյն թուին լոյս կէ տեսել Սերբիայում: Սակայն դա տաղանդաւոր գրողի կարգի էրդն էր: Նոյն 1890 թուին նա մեռաւ թորախտից, ինչպէս և սերբական յայտնի գրողներից շատերը:

[Faint, mirrored text from the reverse side of the page, likely bleed-through from the other side of the leaf.]



օտ ութ տարեկան էի ես ժամանակ և հասկանալի է, որ չեմ կարող չիշել բոլոր մանրամասնութիւնները. ուստի ձեզ կրպատեմ միայն այն, ինչ որ միտս է մնացել: Մեծ քորս այդ զեպքի մասին էլի շատից քչից գիտէ, իսկ ինչ վերաբերում է փոքր եղբօրս՝ նա այդ մասին ոչինչ չի էլ կասկածում: Ես չիմար չեմ, որ նրան պատեմ: Մայրըս այդ մասին ինձ էլ պատմել է այն ժամանակ, երբ ես արդէն հասակս առած մեծ տղայ էի: Իսկ հայրս—և ոչ մի խօսք:

Նա, այսինքն հայրս, հագնւում էր տաճկի նման: Նաո գեղեցիկ չիշում եմ նրա հագուստները: Կարմիր մետաքսեայ ճէմադան (մի տեսակ ժիլետ) մի քանի շարք ոսկի ժապաւեններով. ձեմադանի վրայից կանաչ մահուզից կարած չիւրչէ (կապայ): Սիւսյը (կաշէ գօտի՝ գէնքի համար) զարդարուած էր ոսկով. փղոսկրեայ կոթով ատրճանակը և արծաթապատ դանակը՝ գօտում: Սիւլայի վրայից պրաճալոս (աբրեշու մի գօտի), որի փնջերը կախ էին ընկած ձախ

կողմից: Մետաքսեայ փնջերով շալուարը գեղեցկորէն ծածկում էր ոտները կիսով չափ: Ոտներին սպիտակ գուլքաներ և ցած կրունկներով կոշիկներ: Գլխին դնում էր Փէս՝ քիչ ծռած ականջի վրայ: ձեռքին երկար չիբուխ՝ սաթի կոթով, աջ կողմից գօտուց կախում էր թիւթիւնի ոսկեկար քիսան՝ զարդարուած ապակեայ յուլունքներով: Իսկական պճնասէր:

Ինչ վերաբերում է նրա բնաւորութեանը— թէ և հայրս է, բայց որ սկսել եմ պատմել, էլ հարկ չկայ ծածկելու— դա մի զարմանալի բնաւորութիւն էր:

Նա միշտ բարկացած էր լինում և ընդունակ էր միայն հրամայելու. Ստոււած հեռու պահէ, եթէ մէկը նրա պատուէրը չկատարէր: Նա միշտ կամենում էր, որ ամեն բան իր ուզածին պէս լինի և ո՛վ կը համարձակուէր նրա հետ վիճել: Երբ բարկանար, անիծում և հայհոյում էր անդուռն բերանով: Իսկ բարկանում էր ամեն մի չնչին առթով: ձակատը կնճուում էր, ներքին շրթունքը կճոտում, աջ բեղը ոլորում, յօնքերը կիտում, իսկ սև աչքերը սնց էին փայլատակում: Հապա մօտեցիր այդ միջոցին և ասա, թէ դասս չեմ իմանում:

Ինքս էլ չգիտէի, թէ ինչո՞ւ նրանից այդպէս վախենում էի: Սսենք թէ՛ շատ շատ, պէտք է ինձ խփէր, է, դրանից լինչ: Բայց ես դողում էի հէնց նրա հայեացքից միայն: Հէնց որ աչքերը փայլատակում էին, մարդ սարսուռում էր տերևի նման,

ինքն էլ չիմանալով թէ ինչո՞ւ:

Շատ քիչ էր պատահում, որ նա ծիծաղէր. այն էլ այնպէս չէր ծիծաղում, ինչպէս ուրիշները: Յիշում եմ— մի անգամ նա խտտած պահում էր փոքր եղբօրս և իր ժամացոյցը տուել էր նրան խաղալու. մեր Ձոկիցան բոլոր ուժով աշխատում է ժամացոյցը հօրս բերանը կոխել և բոլոր ուժով գռուում է, որովհետև հայրս չէր ուզում բերանը բաց անել: Ես ու քոյրս ուղղակի ծիծաղից մեռնում ենք և երևում է, որ նրա համար էլ ծիծաղելի է, որովհետև բերանի ձախ անկիւնը քիչ կձկուել էր— դա շատ հազուադէպ բան էր: Նա ծիծաղում էր միայն այն ժամանակ, երբ այնպիսի մի բան էր պատահում, որ ուրիշները ծիծաղելուց թուլանում էին:

Քեռ միտս է, ինչ որ պատահեցաւ քեռուս մահուան ժամանակ, որի հետ հայրս ընկեր էր և որին շատ սիրում էր: Քեռակինս, մայրս, քոյրս և մենք երեխաներս աղաղակում ենք, լաց ենք լինում, ողբում ենք, իսկ հայրս լուռ է, ասես թէ այդ բանը նրան չի վերաբերում: Մի կաթ արտասուք չթափեց, ոչ մի անգամ չհառաչեց: Միայն, երբ ննջեցեալին տանից դուրս տարան, հօրս ներքին շրթունքը դողաց. նա յենուեց դռանը, սփրթնեց ինչպէս մեռել և լուեց...

Բաւական էր, որ նա մի անգամ մի խօսք ասէր. գլուխը կտրել կըտար, որ տուած խօսքը չէր փոխիլ, եթէ մինչև անգամ նա իմանար, որ յետոյ պիտի զղջայ այդ մասին:

Յիշու՛մ եմ, թէ ինչպէս արձակեց ծառայու-
թիւնից բանուոր Պրոկային: Երևում էր, որ նա զըզ-
ջացել էր և խղճում էր նրա վրայ, բայց առած խօս-
քը նա չուզեց փոխել: Բոլոր բանուորներից նա Պրո-
կային աւելի էր սիրում: Միտս է. նա միայն մի
անգամ է խփել նրան, որովհետև Պրոկան մո-
ռացել էր գինու տակաւը փակել, ուստի և մօտ
մի վեղբոյ գինին փչացաւ: Բացի այդ գէպքից, նա
մատով անգամ նրան չի դիպել: Նա հաւատում էր
նրան ամեն բանում. ուղարկում էր գիւղը փողի
համար և ուրիշ այգպիսի բաներ էր յանձնարարում
նրան: Իսկ գիտէք ինչու համար արձակեց նրան:
Բոլորովին դատարկ բանի համար: Նա նկատեց, որ
Պրոկան գիր ու ղուշ է խաղում: Պրոկան Իւրևի
տօնին գալիս է խանութ, որ միւս տարուայ համար
պայմանաթուղթն ստորագրէ: Հայրս հանեց իննը-
սուն ղրուշ և ասաց.

— Ահա՛, վեր առ ուճիկդ: Դու այլ ևս ինձ
հարկաւոր չես. գնա քեզ համար այնպիսի տեղ
գտիր, որ ուզածիդ չափ կարողանաս գիր ու ղուշ
խաղալ:

Պրոկան Ֆէսը աչքերի վրայ քաշեց, սկսեց
դառնապէս լաց լինել և հօրիցս ներողութիւն խնդրել:

Հօրս գութը շարժուեց. ես այդ շատ լաւ տես-
նում էի. բայց դուք կարծում էք, թէ ներեց: Աս-
տուած մի արասցէ: Նա միայն մի ոսկի էլ հանեց
և տուաւ նրան:

— Ա՛ռ և քաշուիր գնա:

Պրոկան դուրս եկաւ. իսկ հայրս ցաւում էր,
որ մի դարտակ բանի համար արձակեց ամենալաւ
բանուորին:

Երբէք նա հանաք չէր անիլ ոչ մեզ՝ երեխա-
ներիս հետ, ոչ մօրս և ոչ էլ մէկ ուրիշի հետ:
Ամենից զարմանալին նրա վարմունքն էր մօրս հետ:
Չի կարելի ասել, որ նա, Աստուած չանէ, ինչպէս
ուրիշները, մօրս ծեծում էր: Ո՛չ, այգպիսի բան չկար:
Բայց նա մօրս վերաբերութեամբ միշտ սառն էր,
գիւրագրգիւ, օտարից էլ վատ: Իսկ խեղճ մայրս՝
Աստուծոյ գառան նման բարի էր և նրա վրայ
հոգ էր տանում այնպէս, ինչպէս թուխսը իր ճտե-
րի վրայ: Հայրս երբ նրան մի բանով վիրաւորէր,
նա միայն դառն արտասուք էր թափում: Միւսնոյն
ժամանակ իր արտասուքը պիտի ծածկէր հօրիցս
էլ, մեզանից էլ:

Մայրս հօրս հետ ոչ ոքի մօտ չէր գնալ և
մինչև անգամ չէր համարձակուիլ ծպտուն հանել
այդ մասին, որ իրան մի տեղ տանէ: Նրա համար
անտանելի էր, երբ մայրս խառնւում էր առւտրա-
կան կամ առհասարակ իր մի որ և է գործի մէջ:
Ինչպէս եղաւ, մայրս մի անգամ ասաց.

— Դմիտր, ինչո՛ւ արաղները Ստանսին չես տա-
լիս: Չէ որ մենք շուտով նոր արաղներ պիտի ստա-
նանք. ինչպէս պիտի տեղաւորես այդքանը:

Տեսնելու բան էր, թէ նա ինչպէս յարձակուեց
մօրս վրայ.

— Քողցն՛ձ ես մնացել, ի՛նչ է: Ի՛նչդ է պակաս.

հը: Փողը ձեռքիդ է, երբ սլակասում է, ինչ
ասա: Իսկ գործերիս մէջ մի խառնուիր:

Մայրս լուեց: X

Ուրիշների հետ էլ նա քիչ էր խօսում: Սրճա-
տանն նա իր առանձին շրջանն ունէր և խօսած
ժամանակ միայն իր բարեկամների հետ էր խօսում
երբեմն: Ամենից աւելի նա յարգում էր քաւոր
Նղիային: Դա միակ մարդն էր, որ կարող էր հօրս
ասել, ինչ ուզենար: Հայրս դեռ մի քիչ վախենում
էլ էր նրանից:

Մեզ՝ երեխաներիս և մօրս նա սիրում էր. այդ
մասին կասկած չէր կարող լինել: Սակայն մեզ շատ
խիստ էր սպահում: Ես չեմ կարող մտաբերել, որ
նրա կողմից երբ և իցէ մեր վերաբերութեամբ մի
քնքշութիւն արտայայտուած լինի: Պատահում էր,
որ նա գիշերները մեզ ծածկում էր վերմակով, երբ
բացում էինք. չէր թողնում, որ ջրհորի մօտ
գնանք կամ ծառ բարձրանանք: Բայց չէ որ նոյնն
անում են նաև ուրիշ հայրեր. սակայն նրանք երե-
խաների համար առնում են նաև քաղցրաւենիք,
ոսկեգօյն թուղթ, ռետինի գնդակ, որ կաղամախի
ծառից էլ աւելի բարձր է թռչում:

Հայրս եկեղեցի էր գնում միայն Իւրևի տօնին,
իսկ սրճատուն՝ ամեն օր: Մենք ընթրիք ենք անում,
իսկ նա չիբուխը գնում է կռնատակին, թիւթիւնի
քիսան գօտին կոխում և հայդէ: Ամառը նա վե-
րադառնում էր ժամի 9-ին, իսկ ձմեռը և աւելի
վաղ: Սակայն երբեմն պատահում էր, որ կէս գի-

շերն էլ էր անց կենում, իսկ հայրս չկայ ու չկայ:
Այդ հանգամանքը սարսափելի տանջում էր մօրս և
քրոջս (այն ժամանակ ես դեռ չգիտէի, թէ ինչ
ասել է սրճատներում թափառի): Մայրս և քոյրս
երբէք չէին քնում մինչև հօրս վերադառնալը, թէև
նա վերադառնար արշալուսին: Նրանք նստում
էին մահճակալի վերայ և չէին համարձակում մին-
չև անգամ ճրագը վառել, որովհետև նա սարսա-
փելի բարկանում էր, երբ տեսնում էր, որ ճրագը
դեռ վառ է:

Մի անգամ հայրս ուշ վերադարձաւ: Ես ինքս
լուեցի, թէ ինչպէս նա սկսեց քթի տակ խօսել.

— ձրագն ինչո՞ւ է վառ այս ժամանակ:

— Որ շորերդ հանելու համար քեզ աւելի յար-
մար լինի, Դմիտր, — պատասխանում է մայրս:

— Ես չեմ կարող վառել, ինչ է. կամ գուցէ
կարծում ես հարբած կըլինիմ և ճրագը չեմ կարող
գտնել:

— Բողորովին չէ, Դմիտր, բացատրում է մայրս,
— ես միայն ասում եմ...

— Դու ինչ ես ասում: Դու երևի, ուզում
ես, որ հարևանները կարծեն, որ մեր տանը մե-
ռել կայ:

Դուք կարծում էք թէ նա այդ լսւըջ էր ասում:
Շատ հարկաւոր էր նրան հարևանը: Միայն չէր
ուզում, որ մայրս նկատէ, թէ ինքը երբ է տուն
գալիս և գնում և չարութիւնից չէր իմանում ինչ
անէր: Նա ուզում էր, որ մայրս քնէր այն ժանա-

նակ, երբ նրա քունը բոլորովին չէր տանում. միայն թէ ինքը կարողանար բոլորովին անհող քեֆ անել:

Նա շատ քիչ էր խմում, էն էլ միայն գինի: Արաղը նրա համար անտանելի էր և երբ պատահում էր, որ առնելու ժամանակ փորձի համար մի կում բերանն էր առնում, իսկոյն թքոտում էր և դէմքը թթուեցնում...

Իսկ ինչ էր անում ամբողջ գիշերը սրճատանը, — կըհարցնէք դուք:

Հէնց դժբախտութիւնն էլ դրանում է: Եթէ նա խմէր, դա դեռ ոչինչ: Բայց... սակայն ինքներդ կրտեսնէք:

Այդ հանգամանքը մօրս կեանքը կիսեց: Նա ջերմ արտասուք էր թափում և չկար մէկը, որին իր բախտից գանգատուէր:

Մի անգամ հայրս ուշ վերադարձաւ տուն... Ոչինչ: Հետևեալ օրը նոյնպէս: Ոչինչ: Յանկարծ մայրս նկատեց, որ ժամացոյցը մօտը չէ: Մայրս վախեցած հարցրեց.

— Ո՞րտեղ է ժամացոյցդ, Դմիտր:

Նա ճակատը կնճռեց, երեսը շուռ տուաւ և ասաց.

— Բելգրադ եմ զրկել ուղղելու համար:

— Չէ՞ որ ճիշդ էր բանում, Դմիտր:

— Կարծեմ ես ոչ խուլ եմ, ոչ կոյր: Այդ ես գիտեմ՝ ժամացոյցը լաւ էր բանում, թէ վատ:

Ի՞նչ պէտք է անէր մայրս: Հասկանալի է. նա

լուեց: Լսում եմ, որ չետոյ նա քրոջս գանգատուում է.

— Ո՛հ, ծանր է. նա ամեն ինչ տանուլ կրտայ և ծերութեան օրերում ստիպուած պիտի լինինք ուրիշի շապիկները լուանալու:

Մի անգամ էլ՝ այսպէս մօտ ժամի 10-ին, սըրճատնից հայրս վերադարձաւ տուն: Գլխին Հաշտարխանի մօրթի գլխարկ. մատի հաստութեամբ մի ոսկի շղթայ կրծքից կախած, թանգագին քարերով զարդարուած ոսկեպատ ատրճանակը գօտում: Երևում էր, որ քեֆը տեղն էր:

Երբ ներս մտաւ, ժամացոյցը հանեց. կարծես ուզում էր իմանալ՝ ժամի քանիսն է:

— Գու արդէն ժամացոյցդ ստացել ես հա՛, — հարցրեց մայրս: — Ուղղուած է:

— Ուղղուած է, — պատասխանեց հայրս:

— Իսկ այդ մօտիդ շղթան ինչ շղթայ է:

— Շղթայ է էլի՝ ուրիշ շղթաների նման:

— Տեսնում եմ, — ասաց մայրս, — բայց ո՞րտեղից ես ձեռք բերել:

— Գնել եմ:

— Իսկ այդ գլխարկը: Այդպիսի մի գլխարկ ես տեսել եմ միայն գանձապահ Միչի գլխին:

— Գլխարկն էլ եմ գնել:

— Նա քեզ վրայ ծախել է:

— Ծախել է:

— Իսկ այդ ինչ...

Այդ միջոցին հայրս յօնքերի տակից նայեց մօրս և նա լուեց:

Հայրս սկսեց շորերը հանել: Ես նայում եմ վերմակի տակից: Նա հանեց գօտուց բռան մեծութեամբ մի կապոց և ձգեց սեղանի վերայ: Կապոցը զրնգաց. կապոցի մէջ միայն ոսկիք կային:

—Վեր առ պահիր,—ասաց հայրս և զնաց խոհանոց:

Մայրս կապոցը երկու մատով վերցրեց՝ ասես մի հարամ բան լինէր:

Ինչ անեմ այս փողը,—ասաց քրոջս,—սա անիծուած փող է... դիւական: Չար դէն ինչպէս բերել է, այնպէս էլ կը ասնէ:

Մի ժամանակ, պատմում էր մայրս, նա բոլորովին ուրիշ մարդ էր: Յիրաւի, ինքս էլ աղօտ կերպով մտաբերում եմ՝ ինչպէս շատ անգամ նա ինձ նստեցնում էր ծնկների վրայ, երբ ես դեռ շատ փոքր էի. նա ինձ համար շուէիներ էր շինում ուռնուց և իր հետ տանում էր խոտահարք: Սակայն սկսած այն ժամանակից, երբ նա սկսեց ընկերութիւն անել զանձապահ Միչի, Մակաւինի փողոցի Կրքստի, դեղավաճառ Ալբրեխտի և ուրիշ մի քանիսների հետ, ամեն բան փոխուեց, ամեն բան թարս գնաց: Նա միշտ բարկացած է, միշտ խոյս է տալիս ամեն տեսակ հարցուփորձից. իսկօյն ընդհատում է.

—Բանիդ կաց. կամ թէ՛ գործ չունիս, ինչ է: Անկասկած, նա ինքը շատ լաւ հասկանում էր, որ իր վարմունքը շատ տղեղ է, բայց երևում էր, որ չար

դէր նրան կաշկանդել էր և իր ճիրաններից չէր ազատում:

Բայց և այնպէս, թէև շատ ծիծաղելի կարող է թուալ, իսկապէս նա լաւ մարդ էր: Բայց միայն...

Նա մի անգամ բաւական ուշ վերադարձաւ տուն և այս անգամ մի ուրիշ մարդու հետ: Մայրս այդ բանի վրայ շատ զարմացաւ: Նրանք ցած ձայնով խօսելով անցան բակը, յետոյ մտան գոմը: Քիչ ժամանակից յետոյ մենք լսեցինք ձիու ոտի ձայն. չհասկացանք, թէ դա ինչ բան է:

Երբ հայրս մի քիչ յետոյ սենեակ մտաւ, ես սկսեցի խումփացնել. քոյրս էլ քնած ձեացաւ: Հայրս «բարի երեկոյ» ասաց և լուց: Նա էլ լուռ է, մայրս էլ լուռ է, իսկ ես շարունակ սպասում եմ, թէ վերջն ի՞նչ կը լինի:

Վերջապէս մայրս արտասանեց.

—Սև ձին տարան:

—Տարան,—ասաց հայրս:

Կրկին լուցին. միայն երբեմն երբեմն մայրս հեծկտում էր. ես տեսնում էի, որ նա լաց էր լինում:

Դմիտր, Քրիստոսի անունով աղաչում եմ քեզ, դու լինիս մեր որդոց արևը, ձեռք վեր առ, հոգիս, այդ սատանայական փեշակից: Սատանայի բարեկամը կորած է այստեղ էլ, միւս կեանքումն էլ: Քեզ օրինակ Յովոյ թղթամոլը: Հիանալի տանտէր էր, իսկ այժմ բանն այնտեղ է հասել, որ ուրիշի կիստորն է հաւաքում և հրէաների համար գիւղե-

րում մորթիք է գնում: Միթէ դու չես խղճահա-
րուիլ, որ ես ծերութեան հասակումս ստիպուած
լինիմ մի կտոր հաց մուրալու, որ մեր երեխաները
ուրիշի մօտ ծառայեն... և նա սկսեց հեկեկալ:

Տէր Աստուած, հայրս ինչպէս գոռաց.

— Խեղքիդ քնչ քամի է փչել, չեմ հասկանում,
որ երգուեցնում ես մեր որդոց արևով և ինձ վրայ
լաց ես լինում, ինչպէս մեռելի վրայ: Ի՞նչ ես պռօշ
արել մի սատկած ձիու համար: Ուզենամ, մօտ
էգուց տասն այգպիսի ձի կառնեմ:

Մայրս սկսեց աւելի սաստիկ լաց լինել:

— Գիտեմ, Գմիտր, հոգիս: Ախր այդ աւագակ-
ներն աշխատում են ձեռքիդ եղած — չեղածը խելէ:
Թող վերջապէս, հոգիս, այդ անիծուած չարագու-
շակ կարտը: Դու գիտես, որ մենք մեր արիւն—
քրտինքովն ենք մեր գլխի վերև ծածկոց շինել:
Ի՞նչ պատճառով պիտի իմ տանիցս դուրս անեն
այդ գարշելիները:

— Քեզ ս'իլ է դուրս անում:

— Դեռ ոչ ոք. բայց դուրս կանեն, եթէ այդ-
պէս շարունակես: Դա Աստուծոյ անիծած պարապ-
մունքն է:

— Ես քեզ արգէն հարիւր անգամ ասել եմ,
որ գլխիս քարոզներ չկարգաս և առանց պատճառի
չոռնաս: Խելքս կորել է, ինչ է, և դրա համար
ինձ կին խնամակալ է հարկաւոր:

Խեղճ մայրս լռեց: Նա էլ լաց չէր լինում:
Նրա արտասուքները ներս էին հոսում և ինչպէս

քար ծանրանում էին սրտի վրայ:

Անցնում էին օրերը, իսկ հայրս շարունակ իր
առաջուայ կեանքն էր վարում: Նա շատ անգամ
գրպանները լիքը ոսկի էր բերում: Փողն ինչպէս
գալիս, էնպէս էլ գնում էր:

Նա շատ անգամ գալիս էր առանց մատանի-
ների, ժամացոյցի և առանց ոսկեկար սիլայի: Իսկ
երբեմն էլ պատահում էր՝ բերում էր մի քանի
ժամացոյց և մատանիներ: Մի անգամ նա բերաւ
մի զոյգ կօշիկ և մի սերթուկ, մի ուրիշ անգամ
էլ մի թամբ: Պատահում էր, որ գիւժիւնով արծա-
թէ գզալներ էր բերում: Մի անգամ այգպէս քաշ
տալով բերաւ մի ամբողջ տակառ չորացրած ձուկ:
Ինչպէս եղաւ, մի անգամ էլ երեկոյեան մի սև ձի
բերաւ. դա նոյն իսկ մեր սև ձին էր:

Մենք արգէն ընտելացել էինք այդ բոլորին.
միայն մայրս շարունակ լաց էր լինում և տանջ-
ւում: Ի՞նչ անէր խեղճը, որ լաց չլինէր և չտան-
ջուէր: Մեր խանութի առևտուրը բոլորովին կանգ-
նեց. բանուորները մէկը միւսի ետևից դուրս էին
գալիս: Ամեն բան այնպէս էր գնում, ինչպէս մի
նզովուած տան: Իսկ փողերը հէնց այնպէս անհե-
տանում էին:

Վերջապէս հօրս ընկերներն սկսեցին մեր տուն
էլ յաճախել: Փակում էին մեծ սենեակում, վա-
ռում էին մի քանի ճրագ: Ոսկիները գրնգում էին.
թիւթիւնի ծուխը բարձրանում էր. կարտերը շրբի-
կացնում էին. իսկ մեր ծառայ Ստոյանը նրանց

329-2003 (1960-50)



Համար շարունակ սուրճ է պատրաստում (հետևեալ օրը նա ցոյց է տալիս մի քանի ոսկի, որ նա ստացել էր խաղացողներից իբրև արաղչէք): Իսկ մայրս մեզ հետ նստած է միև սենեակում. նրա աչքերը կարմրած են, դէմքը գունատ, ձեռները նիհար: Նա ժամանակ ժամանակ շշնջում է.

«Աստուած, խղճած մեզ»:

Հայրս տանից բոլորովին կտրուեց: Նա շարունակ լուռ է և երբէք մօրս աչքերին չի նայում: Մեզ՝ երեխաներիս ոչ փայփայում է և ոչ յանդիմանում: Միշտ աշխատում է տանից հեռանալ: Միայն որքան ուզում ենք, փող է տալիս. եթէ մի մատիտի փող է հարկաւոր, նա մի գիւժիկ է տալիս: Քաղաքի ամենալաւ ուտելիղէնները մեզ համար առնում էր: Ամբողջ ուսումնարանում ամենքից լաւ ես էի հազնուած: Այնու ամենայնիւ ինձ համար ծանր էր նայել մօրս և քրոջս վրայ: Նրանք կարծես ծերացել էին, գունատուել. շարունակ տխուր էին և մտատանջութեան մէջ: Ոչ մի տեղ չէին գնում բնաւ. մինչև անգամ փողով տօնին*) հազիւ յաջողում էր զօրով դուրս հանել տանից:

Միևնոյն ժամանակ մեզ մօտ կանայք համարեա այլ ևս չէին գալիս: Միայն մարդիկ էին լինում, այն էլ «շրջմոլիկներ», ինչպէս անուանում էր նրանց մայրս:

*) Տօն ի պատիւ այն սրբի, որի հովանաւորութեան տակ գանձում է ընտանիքը:

Մեր խանութի առևտուրը համարեա բոլորովին կտրուեց:

— Ի՜նչ, — ասում է հայրս, — պիտի նստեմ գիւղացիներին մի շահու լեղակ ծախեմ: Գա հրէաների գործն է: — Մայրս չի համարձակուում ծախուն հանել: Հայրս նրան ասաց.

— Լսիր. ես քեզ սերբերէն եմ ասում. եթէ այդ մասին դու ինձ մի խօսք անգամ ասես, ես ինձ համար ուրիշ տուն կըձարեմ և կըգնամ այն տեղ կապրեմ: Իսկ դու այն ժամանակ ում ուզում ես՝ քարոզիր: Այս խօսքերը հալիւր՝ ականջդ ածա:

Խեղճ մայրս շարունակ լուռ է: Երևում է՝ ճրագի նման հալում է. շարունակ աղօթում է. Աստուած, մի թողիր մեզ:

Ահա կըտեսնէք վերջն ինչ եղաւ: — Մի անգամ ահա գիշերը նրանք բոլորը մեզ մօտ եկան: Նրանց հետ եկաւ նաև մի ուրիշը՝ Պերոյ Զելեմբաչ անունով, որ խոզի առուտուր էր անում և Պեշտ քաղաքի հետ գործ ունէր: Նրա բեղերը ոլորած էին և սուր, ինչպէս բիզ, ճակատին հերագիծ, իսկ կիսամօրուսը ծածկում էր թշերը: Նա մի հաստամարմին և լայնաթիկունք մարդ էր: Գլխարկը քիչ ծուռ էր դնում, իսկ կրծքին կախում էր ոսկի շղթայ, ինչպիսին առաջ հայրս էլ ունէր: Նրա մատի մատանին այնպէս էր շողշողում, որ վրան նայելիս մարդի աչք էր ծակծկում: Նա գնում էր օրօրուելով դէպի ամեն կողմ. խօսում էր բարձր խուլ ձայնով և փոքրիկ կանաչ աչքերով շարունակ ծիծաղում էր:

Ահա նրանք եկան: Ստոյանն իսկոյն սուրճ պատրաստելու ետեից ընկաւ:

Նրանք չորս ճրագ վառեցին: Թիւթիւնի թանձր ծուխը բարձրացաւ: Նրանք սուրճ են խմում, լուռ են, ինչպէս տաճիկներ. միայն կարտերը խըշխոււմ են և ոսկիները զրնգում:

Դա մի սոսկալի գիշեր էր:

Մէնք մօրս հետ փակուեցանք միւս սենեակում: Ոչ նա, ոչ քոյրս՝ էլ լաց չէին լինում: Նրանց գէմքերը յոգնած էին, աչքերնին կուլ էին գնացել և նայում էին մի տեսակ ցրուած:

Մի քանի անգամ հայրս մեր սենեակը վազեց: Նա քրտինքի մէջ կորած էր: ձեմագանի կոճակներն արձակել էր, շապիկը բաց արել, այնպէս որ երևում էին կրծքի սև ու խիտ մազերը: —

Յօնքերը կիտեց, ինչպէս թուրք:

— Է՛լ տուր, — ասում է մօրս:

Մայրս լուռ է, ինչպէս քար, բաց է անում սնդուկը և տալիս է նրան մի ոսկի. նա գնում է թաշկինակի մէջ:

Նա նայում է իր շուրջը մի տեսակ վայրենաբար, ոտը ոտի առաջ դնելով ճիշդ ինձ նման, երբ ընկերներս սպասում են ինձ դուրսը, իսկ այդ ժամանակ քոյրս ինձ համար մի կտոր հաց է կարում նախաճաշի համար: Նա վերցնում է փողը, գլուխը մի կողմն է շրջում և հեռանալով քթի տակին ինքն իրան խօսում է. «Միայն այս մի անգամը»: Յետոյ ասես թէ նա սենեակից դուրս է թըռ-

չում: «Միայն այս մի անգամս, միայն այս մի անգամս»: Գիշերուայ մօտ ժամի երեքին, կարծեմ հինգերորդ անգամ, նա վազեց մեր սենեակը:

Տուր, — ասում է մօրս: Դէմքը մռայլ էր, ինչպէս գիշեր: Մայրս զնաց սնդուկի մօտ. երևում էր, ինչպէս մօրս ոտները գողում էին: Այդ միջոցին ես վերմակի տակից տեսայ, թէ ինչպէս գողում էր հայրս. նա բռնեց վառարանից:

— Ծուտ արա, — ասում է մօրս և ճակատի քրտինքը սրբում:

Մայրս տալիս է նրան փողը:

— Բոլորը տուր, — ասում է մօրս:

— Մնացած տասը ոսկին է, — պատասխանում է մայրս: Սակայն դա ձայն չէր, ոչ էլ շշուկ, դա աւելի նման էր մեռնողի վերջի հառաչանքին:

Նա վերցրեց փողը և սենեակից դուրս ցատկեց:

Մայրս ուշաթափ ընկաւ սնդուկի մօտ: Քոյրս ճչաց: Ես տեղիցս թռայ, Ջոկիցան էլ վեր թռաւ: Մենք բոլորս շրջապատեցինք մօրս և ձեռները համբուրելով՝ ասում էինք. «մայր, մայրիկ»:

Նա ձեռքը գլխիս դրաւ և մի բան շշնջաց: Յետոյ նա վեր կացաւ, պատրոյգը վառեց և կանթեղը լուսաւորեց ս. Գէորգի պատկերի առաջ:

— Դնանք, զաւակներս, Աստուծուն աղօթենք, որ նա մեզ կորստից ազատէ, — ասաց նա:

Նրա ձայնը հնչում էր, ինչպէս զանգակ, իսկ աչքերը փայլում էին երկնքի աստղերի նման: Մենք վազեցինք պատկերի մօտ և բոլորս էլ չոքեցինք:

իոկ Զոկիցան չոքեց մօրս առաջին, երեսը դարձրեց
 դէպի մայրս, իաչակնքեց և բարձր ձայնով ասաց
 «Հայր մերի» կէսը. խեղճը միայն այդքանն էլ զի-
 տէր: Յետոյ նա նորից խաչակնքեց, մօրս ձեռքը
 համբուրեց և կրկին սկսեց նրա երեսին նայել:
 Մօրս աչքերից արտասուքը թափուում էր: Նրա
 հայեացքը դարձրած է դէպի պատկերը և դէպի
 երկինքը: Այնտեղ՝ բարձրում մի բան կար, որ նա
 տեսնում էր, այնտեղ էր նրա Սատուածը, որին
 նայում էր և որը նայում էր իր վրայ: Նրա դէմ-
 քի վրայ ցոլաց մի տեսակ երանութիւն և ինձ թւում
 էր, որ Սատուած նրան օրհնում էր իր աջովը. ս. մար-
 տիրոսը ժպտում է և օձը նրա ոտների տակ սատ-
 կում է: Յետոյ իմ աչքերս սևացան. ես վայր ըն-
 կայ նրա շորերի ծայրին՝ ձախ կողմում, ձեռքով
 նա ինձ պահում էր. հազար անգամ ես կրկնեցի.
 «Սատուած, դու տեսնում ես մօրս. Սատուած, խըղ-
 ճա՛ հօրս»: Իսկ յետոյ, ինքս էլ չգիտեմ ինչո՞ւ, աւե-
 լացրի. «Սատուած, դու սպանիր այդ Զելեմբաչին»:
 Երկար ժամանակ մենք այսպէս աղօթում էինք:

Յետոյ մայրս վեր կացաւ, բարձրացաւ նստա-
 րանի վրայ և ս. Գէորգի պատկերը համբուրեց:
 Քոյրս հետևեց նրա օրինակին, իսկ յետոյ մեզ էլ
 Զոկիցայի հետ բարձրացրին. մենք էլ համբուրեցինք
 սրբի պատկերը: Վերջապէս մայրս վերցրեց չորա-
 ցած ծաղիկների մի փունջ, որ գտնուում էր պատ-
 կերի ետևը, ձրեց օրհնած ջրով լիքը մի շշի մէջ և
 մի բան շշնջալով՝ նրանով խաչակնքեց մեր սենեա-

կը: Յետոյ նա առանց աղմուկ հանելու բաց արաւ
 դուռը, ոտերի ծայրին թօտեցաւ դռանը, որ տա-
 նում էր դէպի մե՞ծ սենեակը և այն էլ խաչա-
 կնքեց:

Ո՛րքան թեթևացաւ այն ժամանակ սիրտս,
 ինչպիսի երանութիւն գգացի: Այժմ այդպիսի բան
 զգալու էլ ընդունակ չեմ:

Հազիւ մայրս խաչակնքեց մե՞ծ սենեակի դուռը,
 իսկոյն այնտեղ աղմուկ բարձրացաւ: Ոչինչ չէր
 կարելի հասկանալ. միայն Զելեմբաչն էր բոլոր ու-
 ժով գոռում.

— Ո՛վ կարող է ստիպել ինձ գեռ խաղը շա-
 րունակել. ո՛վ:

Յետոյ սկսուեց անորոշ աղմուկ և վէճ: Վեր-
 ջապէս մենք լսեցինք, որ դռները բացուեցան. աղ-
 մուկ և սպա ոտնաձայն:

Սակայն հայրս մեր սենեակը չմտաւ: Մենք
 զուր նրան սպասում էինք: Արդէն ծագել էր, երբ
 Զոկիցայի հետ քնեցինք. իսկ նա դեռ չկար:

Արեգակը բաւական բարձրացել էր, երբ ես քնից
 արթնացայ: Ես զգում էի սաստիկ յոգնածութիւն,
 սակայն էլ չկարողացայ քնել: Ես վեր կացայ:

Ամեն բան տօնական, բայց միևնոյն ժամանակ
 տխուր տեսք ունէր:

Դուրսը՝ բակում ամեն բան հանդարտ է: Պայ-

Ճառ լոյսը բաց պատուհանից սենեակն է թափուում, իսկ պատկերի առաջ դեռ փալփլում է կանթեղի կրակը: Մայրս և քույրս գունատուել են ինչպէս կտաւ: Նրանց աչքերը թաց են, դէմքերը կարծես մոմ լինէին. նրանք ճմռում էին իրենց ձեռքերը, ման են գալիս մատների վրայ. ոչինչ չեն խօսում. միայն շշնջում են աղօթքի բառերը: Մենք նախաճաշ չարինք. մեզ ոչ ոք չի հարցնում. քաղցած ենք, թէ ոչ: մայրս մեզ ուսումնարան չի ուղարկում:

— Սա ինչ բան է, — հարցնում էի ինքս ինձ: — Չլինի մեր տանը ննջեցեալ կայ, կամ գուցէ քեռիս լիտ է դարձել և պէտք է նրան նորից թաղել:

Յանկարձ մի սարսուռ զգացի. լիշեցի, ինչ որ պատահել էր անցեալ գիշերը և ակամայ շշնջացի. «Աստուած, խղճահ հօրս» և յետոյ՝ «Աստուած, սպանիր այդ Ձեւեմբաչին»:

Ես կօշիկներս հագայ և սենեակից դուրս եկայ: Ակամայ գիմեցի դէպի մեծ սենեակի դուռը, բայց իսկոյն ստիպուած եղայ կանգնելու, որովհետև զգացի, որ մայրս ձեռքիցս բռնեց:

Ես երեսս շուռ տուի. նա ոչինչ չասեց, միայն մատը բերանին տարաւ. յետոյ ինձ տարաւ մինչև բակը տանող դուռը և այնտեղ ինձ բաց թողեց: Մայրս լետ դարձաւ սենեակը, իսկ ես կանգնած էի դռան մօտ: Նայում էի մօրս յետևից և չէի հասկանում, թէ ինչ կրնա նա կէ աչս:

Յետոյ ես նորից մատներիս ծայրերով մօտեցայ մեծ սենեակին և աչքս դրի բանալիքի ծակի վրայ:

Նայում եմ: Նայում եմ: Նայում եմ:

Սենեակի մէջ տեղը սեղանն է: Նրա շուրջը՝ անկարգ և խառն ի խուռն դրուած են աթոռներ, որոնցից երկու-երեքը թափուած են: Յատակի վրայ փռուած են խաղաթղթեր, կոխ տուած և ամբողջ սիգարներ, կտտրուած գաւաթ, իսկ մէկ կարտի տակից երևում է մի ոսկի. սփռոցը սեղանից կիսով չափ յետ է քաշուած: Սեղանի երեսին ցրուած են կարտեր, շուռ տուած գաւաթներ, պապիրոսի մնացորդներ և մոխիր: Այգտեղ կային նաև մի քանի դատարկ փսէներ, որոնցից միայն մէկի վրայ մի կոյտ մոխիր կար: Սեղանի մօտ մի աթոռի վրայ նստած է հայրս՝ մէջքը դարձրած դէպի դուռը: Արմուկները սեղանի վրայ դրած, գլուխը ձեռքերին յենած՝ նստած է այդպէս անշարժ:

Ես երկար նայում էի. իսկ նա գոնէ մի անգամ շարժուէր: Ես միայն տեսնում էի, թէ ինչպէս նրա կուրծքը բարձրանում և ցածանում էր:

Գլխիս մէջ պտտուում էին զանազան մտայն մտքեր: Օրինակ՝ ինձ թւում էր, ինքս էլ չգիտեմ ինչու, որ նա մեռած է և ես զարմանում էի, թէ ինչպէս կարող է մեռած մարդը շուռ քաշել: Յետոյ ինձ թւում էր, որ նրա ձեռքը թղթից է շինուած և որ նա չի կարող ձեռքով խփել և առհասարակ որա նման լիմարութիւններ:

Աստուած գիտէ, թէ սրբան երկար կրնայէի դռան ծակից, եթէ մօրս ձեռքը նորից չգլխաչէր ինձ: Մայրս ինձ ոչ մի խօսք չասեց, միայն իւր

քաղցր աչքերով ցոյց տուաւ ինձ դուռը:

Զգիտեմ ինչու լանկարծ գլխարկս վերցրի, մօրս ձեռքը համբուրեցի և դուրս վազեցի բակը:

Օրը շաբաթ էր:

Երբ ես փողոց դուրս եկայ, ամեն բան իր սովորական տեսքն ունէր. ամեն մէկն իր գործովն էր զբաղուած: Գիւղացիք ցորեն և կանաչի էին բերում բազար: Գնողները նայում էին քսակները և գննում գառները: Պանդուր*) Նովակը գոռում էր կարողացածին չափ բարձր՝ ցոյց տալով սայլերի կանգնելու տեղը: Երեխայքը կեռաս էին գողանում: Սրբտա գրագիրը զբոսում էր փողոցները և մի թուղթ կարգում, որով արգելում էր խոզերի փողոց դուրս գալը:

Տրևկոն վառարանից հանել էր տապակները և գոռում:

— Համեցէք, տանք տանք է: Իսկ հարբած Յովոն թրփրտում էր լճակի մէջ:

— Ի՞նչ է, ձեր խանութը փակ է, — հարցրեց ինձ ղերձակ Իգնատը՝ մօտիցս անցնելու ժամանակ:

— Այո՛, փակ է, — պատասխանեցի ես:

Գմիտը խօ հիւանդ չէ:

— Ո՛չ:

— Ուրիշ տեղ չի գնացել:

— Գիւղումն է, — ասացի ես և յետ վազեցի բակը:

Բակումն էին ընկերներիցս երկուսը, որոնց

*) Ժանդարմ (ստտիկան):

ուսուցիչն ուղարկել էր հարցնելու, թէ ինչո՞ւ ես ուսումնարան չեմ գնացել:

Ես միայն այժմ յիշեցի, որ պէտք էր ուսումնարան գնալ: Ես վերցրի գրքերս և մի կտոր հաց նայում էի մէկ մօրս վրայ, մէկ ընկերներիս:

— Երեխայք, ասացէք պարոն ուսուցչին որ Միքայէլը չկարողացաւ ուսումնարան գալ. գործ պատահեց:

Թէ ինչ պատահեցաւ մեր տանը՝ երբ ես ուսումնարանումն էի, չգիտեմ: Այսինքն իսկապէս ասելով ես գիտեմ, որովհետև ոչինչ չէր պատահել և երբ ես վերադարձայ, ամեն բան իր նախկին դրութեան մէջ գտայ: Մայրս և քոյրս նստած էին՝ ձեռքերնին ծնկներին դրած: Զոկիցան խաղում էր բակումը: Նա կատուի պոչից մի փոքրիկ աման էր կապել և զուարճանում էր կատուի ցատկոցներով:

Քարգահներն իրանց սենեակում կար էին անում, իսկ Ստոյանը փռուել էր խոտի վրայ և խումփացնում:

Հայրս նստած էր առաջուկայ նման անշարժ: Վաղուց արդէն երեկոյեան զանգն էլ խփել էին: Օրը մթնում էր. իսկ մեր սրտերը... աւելի և աւելի մութ, անտանելի և սոսկալի է դառնում...

Ես նստեցի տան շէմքումը և ձեռքս առայ մի ձեռնարկ. սակայն ես չէի կարգում: Պատուհանից տեսնում էի մօրս դժգոյն դէմքը, որ հանգչում էր նիհար ձեռքի վրայ: Գլխիս մէջ մի տեսակ աղմուկ կար և ես ոչ մի բանի մասին չէի կարող մտածել:

Յանկարծ դուռը ճռնչաց: Մայրս սլատուհանի մօտից խօսոյն փախաւ: Ես դողացի, մեծ սենեակի դուռը բացուեց և շէմքի վրայ յայտնուեց Հայրս: Նա ֆէսը աչքերն էր գցել. բեղերը կախուել էին, դէմքը մթնել էր և ծերացել: Իսկ աչքերը, աչքերը: Ոչ մի նմանութիւն իր առաջուայ աչքերի հետ: Փոս ընկած, մարած, կիսով չափ ծածկուած կոպերով, շարժուած են դանդաղ, նայում են մի տեսակ անմտաբար, ոչինչ չեն որոնում, ոչ մի բանի մասին չեն մտածում: Ասես մի տեսակ դատարկութիւն լինի նրա մէջ բացուած, ինչպէս ապակիները փշրուած դիտակի մէջ: Նրա դէմքի վրայ խաղում է մի տեսակ վշտայի, բայց մի և նոյն ժամանակ քաղցր ժպիտ, որ առաջ երբէք չէր պատահում: Այդպէս ժպտում էր քեռիս, երբ հոգեվարքի ժամանակ հաղորդուում էր: Նամանակս որ մ յմայր

Հայրս դանդաղ քայլերով անցաւ նախասենեակը, բաց արաւ մեր սենեակի դուռը, նայեց և ոչինչ չխօսեց. դուռը կրկին փակեց, դուրս եկաւ փողոց և կամաց կամաց գիմեց դէպի քաւոր Եղիայի տունը:

Քաւոր Եղիայի որդի Թոմասն ինձ յետոյ պատմեց, որ իմ հայրս իր հօր հետ միասին փակուել են մի սենեակում և երկար ժամանակ խօսել են ցած ձայնով մի բանի մասին: Յետոյ նրանց համար թուղթ և թանաք են տարել. նրանք մի բան են գրել, իրանց կնիքները դրել են և այլն: Բայց թէ դա ինչ բան էր—ոչ ոք ոչ մի ժամանակ չի իմանալ: Ժամի ինը և կէսին մենք բոլորս սլառկեցինք

քնելու.—միայն մայրս մնաց նստած՝ ձեռքերը ծալած դրած ծնկների վրայ և իր հայեացքն անմտաբար յառած ճրագի բոցին: ամ յգմ յգմ յգմ յգմ

Յանկարծ բակի դուռը ճռնչաց: Մայրս մի ակնթարթում փչեց ճրագը և մտաւ անկողին: Գերմակի տակին սիրտս այնպէս էր բաբախում, կարծես մէկը մուրճով կուրծքս ծեծելիս լինէր: Դուռը բացուեց և հայրս ներս մտաւ: Նա երկու երեք անգամ գնաց եկաւ սենեակի միջով, յետոյ առանց ճրագ վառելու շորերը հանեց և պառկեց: Ես դեռ երկար լսում էի, թէ ինչպէս նա մահճակալի վրայ կողքից կողք էր ընկնում: Վերջապէս ես քնեցի:

Չգիտեմ՝ քնած ես որքան մնացի: Չգալով ճակատիս վրայ մի խոնտու բան, ես արթնացայ:

Աչքերս բաց արի և սկսեցի շուրջս դիտել: Լրացած լուսինն ուղղակի նայում է սենեակի միջին, իսկ նրա ճառագայթներն ընկնում են մօրս երեսին: Նրա աչքերը փակ են, դէմքն ասես ծանր հիւանդի լինէր. իսկ կուրծքն անհանդիստ շնչում է: Նրա գլխի վերև կանգնած է հայրս: Աչքերը չուել է մօրս վրայ և տեղից չի շարժուում: Քիչ ժամանակից յետոյ նա մօտեցաւ մեր մահճակալին: Նայում է մեր բոլորիս վրայ, նայում է քրոջս վրայ: Յետոյ սենեակի մէջ տեղը կանգնեց, իր շուրջը նայեց և շշնջաց:

—Քնած են,— և ինքը մի սարսուռ գզաց այդ շուրջից և ասես քարացաւ սենեակի մէջ տեղը: X

Նա մնաց երկար այդպէս կանգնած՝ բոլորովին անշարժ և ես տեսնում էի միայն, ինչպէս փայլում էին աչքերը, երբ նայում էր մէկ մեզ վրայ, մէկ մօրս։

Իսկ մենք այնպէս ենք պառկած, որ չենք էլ շարժուում։

Յետոյ նա զգուշութեամբ՝ մատների ծայրերին առանց հեռացնելու աչքը մեր մահճակալներից, մօտեցաւ պատին, որից կախուած էին զէնքերը, վերցրեց արծաթապատ ատրճանակը, փեշի տակ ծածկեց, ֆէսն աչքերի վրայ քաշեց և արագ, հաստատ քայլերով դուրս եկաւ բակը։

Հազիւ դուռը փակուեց, մայրս տեղերից վեր կացաւ։ Նրանից յետոյ վեր կացաւ և քոյրս. կարծես ոգիներ լինէին։

Մայրս արագ, բայց զգուշութեամբ գնաց դէպի դուռը, նրան հետևեց քոյրս։

—Մնա՛ երեխաների մօտ,— շշնջաց մայրս և դուրս եկաւ բակը։

Ես էլ վեր թռայ և նոյնպէս վազեցի դէպի դուռը։

Քոյրս ձեռքիցս բռնեց, բայց ես դուրս պրծայ և ասացի։

—Մնա՛ երեխաների մօտ։

Տանից դուրս վազելով, ես մէջքիցս կռացած հասայ չափարին. չափարի և բալինիքի տակով, որոնք ինձ ծածկում էին, սողալով հասայ և թագնուեցայ ջրհորի ետևը։

Հրաշալի էր գիշերը։

Պարզ երկինք, փայլուն լուսին, թարմ ոդ— ոչ մի ձայն չի լսում։

Ես տեսայ հօրս, թէ ինչպէս արհեստանոցի պատուհանից նայեց և կրկին հեռացաւ։ Վերջապէս նա կանգնեց ամբարի ծածկոցի տակ և ատրճանակը հանեց։

Հէնց այդ մի և նոյն վայրկեանին, չգիտեմ որտեղից, յանկարծ նրա առաջին յայտնուեց մայրս։ Խեղճ հայրս վախեցաւ։ Աչքերը չուեց նրա վրայ և սփռթնեց։

—Գմիտր, իմ գլխիս տէրը, այդ ի՞նչ ես մտածել։

Հայրս դողաց։ Նա մեխուածի նման մնաց կանգնած և ցնորուածի պէս նայում էր մօրս. ձայնը հնչում էր, ինչպէս կոտորուած զանգակ։

—Գնա՛, Մարիցա, թո՛ղ ինձ... Ես կորած եմ։

—Ի՛նչպէս թէ կորած եմ, իմ գլխիս տէրը։ Աստուած սիրես, այդ ի՞նչ ես խօսում։

—Ես ամեն բան տանուլ տուի,— ասաց և ձեռքերը տարածեց։

—Ո՛չինչ. չէ որ բոլորը քո սեպհականութիւնդ էր։

Հայրս մի քայլ լետ գնաց և նորից նայեց մօրս։

—Ախր բոլորը, բոլորը։

—Է, ինչ անենք,— պատասխանում է մայրս։

—Զի՛ն։

—Քոնձուտին ասա և ոչ թէ ձին։

—Եւ մարգը։

— Անպէտք բան էր:
 Նա մօտեցաւ մօրս, նայեց նրա աչքերի մէջ, կարծես ուզում էր ներս թափանցել: Իսկ նա կանգնած է, ինչպէս մի սրբուհի:
 — Տունն էլ, — ասաց և երեսը ծածկեց:
 — Ի՞նչ անենք. միայն դու լինիս ողջ և առողջ:
 — Մարիցա:
 — Դ՛մբար:
 — Ի՞նչ ես ասում դու, Մարիցա:
 — Ես ասում եմ՝ Աստուած պահէ քեզ և մեր երեխաներին: Մեզ ոչ տունն էր կերակրում, ոչ էլ մարգը. դ՛ու, միայն դ՛ու ես մեր սնուցանողը: Մենք մի օր էլ չենք քաղցած մնալ, եթէ որ դու մեզ հետ լինիս:
 Հայրս կուացաւ և ձեռքը դրաւ մօրս ուսին:
 — Մարիցա, — սկսեց նա, — մթթէ դու... նա չվերջացրեց, աչքերը թւաքով ծածկեց և լուեց:
 Մայրս բռնեց նրա ձեռքը:
 — Երբ մենք ամուսնացանք, ոչինչ չունէինք շորից և ամանեղէններից զատ, իսկ այժմ, փառք Աստուծոյ, մի լիքը աուն ունինք:
 Ես տեսնում էի՝ ինչպէս հօրս թւաքի տակից թափւում էր արտասուքը և փայլում էր լուսնի ճառագայթների տակ:
 — Դու մինչև անգամ մոռացել ես, որ ահա- զին քանակութեամբ կիտոր ունինք չարգախումբ:
 — Չճմարիտ է, — ասաց հայրս շատ կակուղ ձայնով:

Նա թւաքովն աչքերը սրբեց և ձեռքերը ցած թողեց:
 — Իսկ այս ոսկի քառամանեակն ինչի՞ս է պէտք. ինչո՞ւ գուր փչանալ: Վերցուր ծախսի համար:
 — Դրանով հաց կառնենք:
 — Իսկ մենք դեռ չենք ծերացել: Մենք էլ առողջ ենք, մեր երեխաներն էլ: Աստուծուն աղօթենք և աշխատենք:
 — Ինչպէս ազնիւ մարդիկ:
 — Դու մի ծոյլ է անգործ մարդ չես: Ձեռքերդ Պարամոսի*) միլիոնների հետ չեմ փոխիլ, եթէ մինչև անգամ այդ միլիոնների կրկնապատիկը տան ինձ:
 — Ձեռք կըբերենք սեպհական տուն:
 — Եւ մեր երեխաներին մարդամէջ կըհանենք, ասաց մայրս:
 — Նրանք էլ չեն անիծիլ ինձ մեռնելուցս յետոյ: Ո՛րքան ժամանակ է, որ նրանց չեմ տեսել:
 — Գնանք, կըտեսնես, — պատասխանեց մայրս և բռնեց նրա ձեռքից, ինչպէս փոքր երեխայի:
 Երեք օտարներից յետոյ ես արդէն սենեակումս էի:
 Հագիւ կարողացայ քրոջս փսփսալ՝ պառկիլ, ինքս էլ բոլորովին ծածկուել վերմակի տակ, նրանք երկուսն էլ ոտք կոխեցին շէմքի վրայ և հէնց այդ մի և նոյն ժամանակ լուսեց առաւօտեան զանգի

*) Բելգրադում յայանի հարուստ:

առաջին ձայնը: Գիշերային լռութեան մէջ բարձր
հնչում էին զանգի ձայները՝ շարժելով մեր հո-
գիները: Եւ ինչպէս փոթորիկը քշում տանում է
չոր տերևները, այնպէս էլ այդ ձայները տարան
մեր տանջանքները, մեր տխրութիւնը...

— Զաւակս, վեր կաց զնանք եկեղեցի:
Գ. Մ. Դ. Լ. Դ. Խ. Կ. Ե.

Անցեալ տարի Բելգրադում տեսայ Պերոյ Զելեմ-
բաչին՝ կալանաւորի շորերում: Նա Տոպչիզերում *)
խիճ էր մանրում....



*) Արքունի այգի՝ որտեղ բանեցնում են կալանաւորներին:

ՀՀ Ազգային գրադարան



NL0585561

